դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ՎԱՐԴ-1>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Տավուշի մարզի Իջևանի համայնքի՝ Իջևանի համայնքապետարանի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով 2025 թվականի <<սեպտեմբերի>> <<02>> <<1>> որոշմամբ հայտարարված թիվ <<ՀՀ ՏՄԻՀ-ՀԲՄ-ԱՇՁԲ-25/28>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 4 արձանագրությամբ կայացված <<ՎԱՐԴ-1>> ՍՊԸ-ի պահանջը բավարարելու մասին որոշումը անվավեր ճանաչելու (վերացնել) պահանջի մասին **հայցը մերժել**:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Հա. ԵԴ2/11476/02/25 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Ա.Օհանյան) 24.11.2025 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո վերացնել:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE8E-97FC-4638-8F25 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am